

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 բուլբի, կէս տարեկանը 6 բուլբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անտիկ իմաստակութիւն.—Ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Վեհապառ կաթողիկոսի մահը. Օրինակե-
լի շերամաւորներ. Նամակ Բաթումից. Նամակ
Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆելդարշաւ կամ Մօլա-
կէ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՅՈՒՍ-
ԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Ինչպէս են գիւղացիք դիմաւորում
գարնան.

ԱՆՏԵՂԻ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ

Մեր քաղաքային Գումայի մէջ նորերում
կազմակերպված օպօզիցիայի շնորհով
մեր քաղաքային վարչութեան մէջ մուտք
են գործել բոլորովին նոր, անտեղի և քա-
ղաքային հաստատութիւնների բնաւորու-
թեան կատարելագոյն հակառակ հայեաղա-
ներ:

Այդ հոգեւոր օպօզիցիայի նախ
առաջ է մղել ազգային սկզբունքը քաղա-
քային ընտրողական ժողովներում և այս
առաջ է բերել Գումայի վերաբերմամբ մի
ինչ որ պարամենտական պատասխանա-
նաւուրութեան անտեղի սկզբունքը:

Քաղաքագլուխը և վարչութեան անդամ-
ները չեն կարող ընտրված լինել Գումայի
փոքրամասնութեան մեծամասնութեամբ, հանդիսա-
ւոր կերպով յայտարարում է հոգեւոր
օպօզիցիան, նրանք իրանց դիրքը պահպա-
նելու համար պետք է յենկան Գումայի
ձայների զգալի մեծամասնութեան վրա....
Ծիծաղելի են, ճշմարիտ, այդ տեսակ ան-
բովանդակ, ճանաչող փրագներ....

Քաղաքային պատգամաւորների շրջանում
որոնց գործն է հոգալ միմիայն քաղաքի
անտեսական շահերի մասին, չեն կարող դո-
յութիւն ունենալ որ և է որոշ կուսակցու-
թիւններ: Ինչ ազգութեան, դասակարգին
կամ պարագմանքին և պատկանէր քաղա-
քի բնակիչը.—նա պետք է ընտրէ այնպի-
սի ձայնաւորներ, որոնց ձգտումը պիտի լի-
նի ընդհանրապէս հոգալ քաղաքի շահերի
մասին, անտես առնելով իր անձնական նեղ
շահախնդրական նպատակները:

Իսկ քաղաքի բնակիչը կարող է կամ իր
անձնական, կամ այն հաստատութեան շա-
հերն աչքի առնել ունենալ որին ծառա-
յում է. ուրիշ ելք չը կայ նրա համար:
Խառնուշիւթից քաղաքացիները ներքին
չէ: Քաղաքային Գուման մի օր և է քաղա-
քական, կամ նոյն իսկ դասակարգային ժո-
ղով չէ, որպէս զի ասպարէզ դառնայ որոշ
զոյնի կուսակցութեան կամ դասակարգային

գործունէութիւնները: Այդ պատճառով քա-
ղաքային ինքնավարութեան հաստատու-
թեան մէջ ծիծաղելի և բոլորովին անտեղի
կը լինէր, եթէ քաղաքագլուխը, նրա փոխա-
նորդը կամ քաղաքային վարչութեան ան-
դամը առաջ բերէին կուսակցական
պատգամաւորութեան վրա հիմնված պատաս-
խանատւութեան սկզբունքը:

Քաղաքագլուխը փոքրամասնութեան
թեման ընտրված լինելով.—պետք է հրա-
ժարվի իր պաշտօնից, կամ վարչութեան
անդամը, քաղաքագլխի պաշտօնի համար
քուէարկվելուց և չընտրվելուց յետոյ.—
պետք է հրաժարվի և վարչութեան ան-
դամի պաշտօնից, ասում է նորաստեղծ
օպօզիցիան.... Բայց դա, մեր կարծիքով
կատարելագոյն անմիտ գաղափար է, դա մի
սկզբունք է, որը կարելի է գործադրել
միայն քաղաքական բնաւորութիւն ունեցող
ժողովներում, որտեղ միշտ կան և պետք է
լինեն որոշ և միմեանցից տարբեր ուղու-
թեան քաղաքական կուսակցութիւններ, և
ոչ թէ քաղաքային (այն էլ մեզ մօտ), բուն
անտեսական բնաւորութիւն կրող Գումայի
ձայնաւորների ժողովում:

Այստեղ կուսակցական պատգամաւորութիւ-
նը տեղ ունի. այստեղ նկատ է բարեխղ-
ճաբար աշխատել քաղաքի ընդհանուր տրե-
տեսական շահերի օգտին.—և աւելի ոչինչ:

Գատարի փրագներն էլ, ինչպէս օրինակ
«Երեւոյ վերանորոգումը» պետք է յայտնի
չափով հնարաւոր համարել: Քաղաքային
անտեսութեան մէջ, բայց ազնուութիւնից և
բարեխղճութիւնից, մեծ նշանակութիւն ու-
նի փորձը, որովհետեւ: Եթէ դուք քաղա-
քային վարչութեան ամբողջ կազմակեր-
պութեան մէջ մի անգամից նոր և անփորձ
մարդիկ կը մտնէք և հենցիկ, փորձված-
ներէն ոչ մինչն չը պահպանէք.—բոլոր քա-
ղաքային գործերն անմիջապէս վատ կեր-
թան: Իսկ եթէ այդ այդպէս է, ուրեմն
ի՞նչ միտք ունի Գումայի նորաստեղծ օպ-
օզիցիայի առաջ բերած մեծամասնութեան
վերաբերմամբ կուսակցական պատգամաւո-
րութեան, կամ քաղաքային գործերի գլուխ
կանգնած անձնավարութիւնների կուսակցա-
կան պատգամաւորութեան սկզբունքը....

Նոյն իսկ բոլոր հասարակական հաստա-
տութիւնների, ինչպէս բանկերի, կուլտուրի,
այլ և այլ ընկերութիւնների նօրմալ կա-
նոնադրութիւնների մէջ՝ օրէնսդրութիւնը
շատ անդամների հերթով մտնել է վարչու-
թեան անդամների հերթով մտնելու դարձ-
անհրաժեշտութիւնը, աչքի առնել ունենա-
լով այն ճշմարտութիւնը, որ մի անգամից
նոր և անփորձ մարդկանց ընտրվելով, այս
կամ այն հաստատութեան ղեկավարութիւ-

նը կընկնի կատարելագոյն անփորձ մարդ-
կանց ձեռքը:

Եւ եթէ քաղաքային կանոնադրութիւնն
այդ նոյն անհրաժեշտութիւնը չէ նախա-
տեսել և քաղաքագլուխը, վարչութեան ան-
դամներն ու Գումայի քաղաքագլուխը մեծ
մասամբ ընտրվում են այնքան տարով, որ-
քան տեւում են Գումայի լիազօրութիւն-
ները, սակայն բոլոր հասարակաց հաստա-
տութիւններին վերաբերող ընդհանուր
օրէնսդրութեան տրամաբանութիւնը պետք
է թելադրէր ձայնաւորներին հասկանալու
որ քաղաքային Գումայի նոր կազմակերպու-
թեան ժամանակ էլ անհրաժեշտ կը լինէր
պահպանել վարչութեան հին կազմակեր-
պութեան պատկանող անդամներից մէ-
կըն ու մէկին, որպէս զի նորերի ու ան-
փորձների շրջանում գոնէ մի երկուսը հը-
նարից ու փորձվածներից մնային:

Եւ այդ տեսակ սառն, գործնական և
արդարացի տեսակէտից նայելով քաղաքային
շահերի ղեկավարութեան բարդ խնդրի
վրա՝ միթէ ներքին է յափշտակվել անտե-
ղի գաղափարներով և ճանաչող, ծիծաղելի
փրագներով, ինչպէս «Կուսակցական պա-
տգամաւորութիւն», «Գործը մեծամաս-
նութեան վրա յենկելու անհրաժեշտու-
թիւն», կամ «Կուսակցական պատգամաւորու-
թիւն» քաղաքային գործերի կանոնադր-
ութեան համար ոչինչ նշանակու-
թիւն չունեցող փրագներ....

Քաղաքային գործերի ղեկավարութիւնը
պահանջում է ազնուութիւն, գործի հաս-
կացողութիւն, խղճմամբ, տոկուն աշխա-
տակարութիւն, փորձ և ընդհանուր
բայց ոչ թէ անձնական շահերին ծառա-
յիլը:

Շատ խորամուկ իմաստուն հարկաւոր չէ
լինել այդ պարզ ճշմարտութիւնն ըմբռնե-
լու համար, բայց որ զխաւսուն է, հարկա-
ւոր չէ գործի պարզութիւնը մշտնջեն,
լիճճել անտեղի և վնասակար իմաստակու-
թեամբ....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երեւոյ վերանորոգումը, ապրիլի 16-ին, ստա-
յանք Վաղարշապատից հետեւալ հե-
ռագրելը:

«Այսօր, 16-ին ապրիլի, առաւօտեան
7 1/2 ժամին, Նորին Վեհափառութիւն
ամենայն հայոց կաթողիկոս, Մակար
Լ, վախճանվեց սրտի պայթիւնից»:

Սուրբաւուր դաւառումն է լինում այդ սուր-
բութիւնը, և զիւղացիք դրան անուանում են
գեւաշա, որը այս կերպ է կատարվում: Հայ
զիւղերից ինչքան աղջիկներ, նորաստեղծ և
նշանադրվածներ կան, բոլորը դուրս են գալիս դաշա:
Սուրբութիւնը, որը ինքն ըստ ինքեան գեղեցիկ է և
զուրկական, գուցէ և ժամանակի ընթացքում կեր-
պարանափոխվել է և դրան աւելացել են դանա-
զան քաղաքավարութիւններ, օրինակ, այդ օրը
նորաստեղծ կամ փեսացուի տանից բաժնեք են
տանում նորաստեղծ կամ նշանադրված աղջկայ տունը
և այդ իբր թէ նշան է, որ նրանք բարեհաճում
են գալ և իրանց նոր խնամքների հետ գնալ
զբօսանքի: Տեսնում էք, ամենից առաջ աղջիկ-
ներն են ընկել, յետոյ հարսնացուները կամ
հարսները և շատ սակաւ տարիքով կանայք, իսկ
պառաւանքներն այդ օրը չեն տեսնի դրանց հետ:
Աղջիկները և հարսները դաշտում կանաչադեղ տեղ
ընտրելով (դա լինում է ճաշից յետոյ) իսկոյն
չըման են կապում և սկսում են իրանց սովորական
պարն ու երգը, իրանց համարձակ խօսակցութիւնը,
ծիծաղել ու վաղվելով: Նրանք այդ օրը, սովորա-
կանից դուրս, չեն ամաչում և ուղղակի իրանց
կանից դուրս, չեն ամաչում և ուղղակի իրանց

Նորին Վեհափառութիւնը ընտրվել
և հաստատվել էր ամենայն հայոց
կաթողիկոս 1885 թվին, ուրեմն վեց
տարի է, որ վարում էր կաթողիկո-
սի պաշտօնը: Հանգուցեալը եպիսկո-
պոս ձեռնադրվեց դեռ Ներսէս Մ-ի
կաթողիկոսութեան ժամանակ, 1852
թվին: Մատթէոս կաթողիկոսի օրով
նա նշանակվեց Թիֆլիսի թեմի առաջ-
նորդ և երկար ժամանակ վարեց ա-
ռաջնորդի պաշտօնը Գեորգ IV կաթո-
ղիկոսի օրով: Ապա 1876 թվին նա
նշանակվեց Բեաւարիայի թեմական
առաջնորդ, իսկ Գեորգ կաթողիկոսի
մահից յետոյ, կաթողիկոսական ընտ-
րութիւնների ժամանակ՝ կաթողիկո-
սական տեղակալ էր: Մակար կաթո-
ղիկոսը 78 տարեկան էր: Նա ծնվեց
Թիւրքայ Հայաստանի Պուլսկեր գա-
ւառի Թեղուտ գիւղում, որքան յայտնի
է 1813 թվին:

Ներսէս ապրիլի 17-ին, Թիֆլիսի
Վանքի մայր-եկեղեցում թեմական ա-
ռաջնորդի կարգադրութեամբ՝ կատար-
վեց հանդիսաւոր հոգեհանգիստ հան-
գուցեալ կաթողիկոսի յիշատակին:
Ներկայ էին բարձրաստիճան անձինք
և մեծ բազմութիւն աղօթողների:

Նոյնպիսի հանդիսաւոր հոգեհան-
գիստ, թեմական առաջնորդի կարգադ-
րութեամբ, կը կատարվի նոյն Վանքի
մայր-եկեղեցում, Նորին Օծութեան
մարմին թաղման օրը՝ Ձատիկի կիրակի,
ս. պատարագից յետոյ, առաւօտեան
11 ժամին:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՇԵՐԱՄԱՏՆԵՐ

Պետական կառուածների միմիայնութիւնը՝ չե-
րամապահութիւնը զարգացնելու նպատակով՝ մի
նոր նախագիծ է կազմել, այն է շատացնել օրի-
նակելի շերամաւորները պետութեան այն տեղե-
րում, ուր նրանք կարելի են, բայց մինչև այժմ
չը կան:

Ինչպէս յայտնի է, վերջին տարիների ընթաց-
քում շերամապահութեան գործը դարձել է պե-
տական կառուածների միմիայնութեան ուղղու-
թեան առարկաներից մէկը, և մէկը միւսի հետե-
ւից լոյս են տեսնում նոր կարգադրութիւններ,
այնչաքանք բաց է թողնում մեծ գումարներ, և
այդ բոլորը մի նպատակով՝ զարգացնել երկրի
արդիւնաբերութեան այդ կարևոր ճիւղը:

Օրինակելի շերամաւորներն կից պետք է հիմն-

օրվայ հերոսութիւնը են համարում:

Վանանց այդ կերպ ընդհանուր ուղարկութեանը
անմասնակից չեն և տղամարդիկ, մանաւանդ
զիւղական երիտասարդութիւնը: Երիտասարդնե-
րից խմբեր են կազմվում, որոնք այդ ընդհանուր
ուղարկութեանը մասնակցում են: Բայց դրանց
վերաբերվելը բնութեան, դարնան եղանակին
այնքան ջնքով չէ լինում և եղանակ էլ շատ միա-
կողմանի է: Մարդը որանց ստանաւորութեամբ
գարնան դիմաւորելը տեսնելուց յետոյ տրամա-
ղել է լինում եղբայրացնելու, որ սրանք, այսինքն
բնութիւնն ու մարդիկ պիտի այնպէս հաշա՝ չը
լինեն, ինչպէս որ կանայք են այդքան բարեկամ
և մինչև իսկ սիրահար:

Ինչպէս վերին աստի, աղաժարվել խմբերով
դուրս գալով դաշտը, ոչ երգում են, ոչ պարում
են և ոչ մի ցոյց բնութեան չեն անում, այլ
զարնան թարմ օդը ներշնչելուց յետոյ, նրա աղ-
ղեցութեան տակ, ցնցվում, զբոսնում են և ի-
րանց ոյժը, որ պիտի ազապայտում գործ դնեն
երկրը մշակելու համար, դարգացնում, մարդում
են, ահա թէ ինչպէս:

Մէկ էլ տեսար, իսկոյն այդ խմբերից մի մեծ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳԻՒՂԱՅԻՐ ԴԻՄԱՆՈՐՈՒՄ ԳԱՐՆԱՆ

Դարնան—բնութեան այդ ամենասիրված եղա-
նակի—սկզբներից զիւղական կեանքը միանգա-
ման արթնանում է: Մարդիկ ամբողջ երեք, չորս
ամիս փակված տան մէջ՝ անչափ կարօտել են
նրան և մի րօպէ առաջ ցանկանում են շտապով
դուրս գալ իրանց ներկայած օդից և նրա մա-
քուր օդը չնչիւ նրա գիրկն ընկնել:
Մարդկանցից աւելի շատ կանայք են համա-
կրում բնութեան այդ զննող եղանակին: Մինչ
տեսնում ենք, որ գարնան առաջին օրերից ըս-
կան գեղջկուհին է աւելի երեւում գալտում ա-
ռաւօտից մինչև երեկոյ: Նա կամ գնում է սերբի-
ու բանջար քաղելու, կամ ուղղակի «սէյլը» անե-
լու, զբօսնելու, երգելու, պար բռնելու, հրձիւր-
բնութեան այդ հրաշալիքով:
Դեռ մարտ ամսվայ սկզբներում, երբ գարնանը

p. S.

միայն 20 վերստ անում և համարում այս-
տեղ շատ անգամ էլ վաշտած, առանց ծածկոցի
լինելով 4—5 օրով ուշանալով։

Մի քանի անգամ ես սայլապաններին տու-
նքներ ենթարկելու երկրորդ, համաձայն բնու-
թյան պայմաններին, նախազգուշացնում էի
նրանք անհամարձեցություն չանել։

Այսպիսի դեպքեր շարունակվում են մինչև
սուրճի երկրորդ սայլապանները վրա սկսում է
աղվել։ Հետևապես նրանք հրաժարվում են ֆուր-
գոնի խնդիրը ծանաղաբնին բնույթ վերցնելուց, այդ-
պիսով էլ միջին այլոց, ինչպիսիք որ Ֆուրգոն
բաժնիկի մեծ է, որի բերդները դառնալով Ե-
րևան, նորից սայլապան են վերցնում, բերում
Արտաշատ և յետոյ վերադառնալով բերում են
Երևանից դուրս լինող, պայմանաժամային 6 օր ուշ-
յա սայլապան էի դրանց լրբությունը պատժելու
համար, բնույթը պայմանների համաձայն, ամեն
մի ուշացրած օրվա համար պոլիցի երեքական
կոտեճ սուղանք նշանակել։

Դադար ընկերություն հաշվարկատար՝ Ի.
Զախանյան.

ՆԱԽԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, հինգշաբթի, ապրիլի 18-ին, հրատարա-
կում ենք Ձեր անունից արած «Մշակի» վեր-
ջին համարը։ Մեր լրագրի հետևից, 45-օրը հա-
մար, մինչև կը հրատարակենք, ինչպես ամեն
ամիս ենք արել՝ հետևելով հինգշաբթի օր, ապ-
րիլի 25-ին։

ԱՍԻԱԲԱՆԻՅԻ հեռագրում են մեզ, որ ապրիլի
15-ին Ասիական ճանցի եկեղեցում, քաղաքի
հայոց ամբողջ հասարակությունը, ներկայությամբ
կատարվեց հոգևորական հանգուցեալ Մեծ Խշ-
խանուհի Օլգա Ֆեոդորովնայի յիշատակին։

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅԻ հեռագրում են, որ Վոլոգդա-
կանկի բանկի ակցիոներները ընդհանուր ժողովը
վաճառքից 1890 թվ. բանկի հաշիվը բանկի
զուտ արդյունքն եղավ 2,885,619 ռուբլի, որից
ակցիոներներին դիվիդենդ կը տրվի 1,920,000
ռուբլի, այսինքն 191/30, իսկ 57,712 ռ. միացվել
պահեստի կապիտալին հետ, որը պայմանով կը
հասնի այժմ 3,616,902 ռուբլի զուտարի։

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅԻ մեզ գրում են, «Զը նայած որ
հայերը Պետերբուրգում մի անհայտ փոքրամաս-
նություն են կազմում (մոտ 40 հազար), բայց
այնուամենայնիվ զուլեկ կռահող են ցոյց տալիս
իրանց հայաբնակային հիմնարկությունները առաջ
առնելու գործում։ Այդ կողմից առանց չափա-
նախաճուճ կարելի է ասել, որ Պետերբուրգի
հայերը օրինակելի կարող են համարվել ուրիշ
տեղերի հայերի համար։ Մենք ունենք մի հոյա-
կապ քաղաքին եկեղեցին, և մի երկսեռ միջա-
նակա ուսումնարան։ Եւ այդ բոլորը իրարմիջ
է ոչ թե մասնաւոր նախաձեռնություն հնարում
այլ տեղիս հայերի հաւաքական ոյժով։ Ուսում-
նարանը, որը մինչև այժմ գնդակահար էր մի մաս-
նաւոր տան մէջ, շուտով կունենայ իր սեփական
հայկապ քաղաքին, երկու յարկանի շինությունը,
որը կունենայ ամեն տեսակ յարմարություններ,
մեծ դաշիվ և պարտեզ։

Մեզ գրում են Պետերբուրգից, որ այս օրերս
կայացաւ այդտեղ երեցփոխանի ընտրությունը։
Կրկին ընտրվեց նախկին երեցփոխան, պ. Բազ-
դասար Խոջայեանց, որը յայտնի է որպէս բարե-
խիղճ և հաւանդոտ մարդ։

ՆՈՐ-ԲԱՅԱՆԻՅԻ մեզ գրում են, «Ապրիլի 2-ին,
երեկոյան 7 ժամին, երկու տեղացի չըբմովիկ
չարագործներ յարձակվում են մի խուլ փողոցում
տեղական պատահականորաւ կառավարչի օգ-
նական Պետրոս Գալաօյանցի վրա և վերքեր են
հասցնում նրան։ Բաղդադապետ վերքերը վտան-
գաւոր են։ Հիւանդը պառկած է այժմ և բժշկի-
վում է տեղական բժշկի ձեռքով։ Պատել չէ բե-
րում նոր-քայտղէտցիներին, որ համբերում են ի-
րանց չըբմանում այդ տեսակ չարագործ սրիկանե-
րին։

Մայրաքաղաքի լրագիրների մէջ կարդում ենք,
«Արտասահմանից ամեն տարի Ռուսաստան են
գալիս տար խոշոր ֆիրմաների դանդաղ ներ-
կայացուցիչներ, որոնք նպատակն է սովորաբար
առևտրական յարաբերություններ կապել մեր վա-
րին։

Ճառականները հետ, կամ օտար անհայտները
ձանդեր մեր երկրում Այժմ լուր է տարածված,
որ մեր ֆիրմաները միմիկտորությունը դիտաւո-
րություն են անել առևտրական գործերով եկող
օտարները անհայտ հարկատուներին հարկատուներին
ենթարկել, պարտաւորեցնելով նրանց վերցնել
գործադատարանի կամ գլխավոր վարչական
ներս Գրա նման հարկատուներին ենթարկված են
առևտրական աների վերադառնալով ներկայացուցիչ-
ները և մի քանի օտար պետություններում, մա-
նաւանդ Ամերիկայում։

ԲԱՐՈՒՄԻՅԻ մեզ գրում են, որ այս օրերս մի շու-
գնեաւում երկու մշակներ ամուսնի ծխից ուշա-
թաթիվեցան և անդադրեցին դարձան։ Նրանց տարան
հիւանդանոց։ Ասում են, որ երկուսն էլ մուսու-
կն արդէն։

Կիրակի, ապրիլի 15-ին, քաղաքային դռնայի
դահլիճում կայացաւ Կովկասի Հայոց Բարեգոր-
ծական Ընկերության ընդհանուր ժողովը, որին
ներկայ էին առաջին և երկրորդ անգամները։ Հաս-
տատուից խորհրդին նոր հասած Արշաճանի տե-
ղական ձեռն Նախահայրը։ Կարգադրից խորհր-
դի առաջարկությունը՝ քաղաքային ուսումնա-
րաններում երկու նոր թոշակատուներ պահելու
մասին և վճարել խորհրդի թուղթը յետ ուղար-
կել, քանի որ նա մի փոքր մուլ էր կազմված և
սպասել խորհրդի աւելի որոշ առաջարկությունը։
Այնուհետև կարծ վիճաբանություններից յետոյ,
հաստատուից տեղական վարչությունների և մաս-
նաւորությունների համար վերաբաղման հրահանգը,
որը կազմել էր խորհուրդը և մշակել էր այս
տարվա տարեկան ընդհանուր ժողովում ընտրած
մի առանձին մասնաժողովը։

Կ. Պոլսից, մի մասնաւոր նամակով, մեզ տե-
ղեկացնում են, որ այնտեղ լուր կայ, թէ խոր-
մեան Հայրիկ Երեստուղէմից պէտք է վերադառ-
նայ Կ. Պոլիս։

Մեզ հաղորդում են, որ զինվազաններում և
պրոգրեսիվներում, նոր կանոններով աշակերտ-
ները ընդունվելու են մայիսի կեսից
միայն։

Ջառիկից յետոյ, թիֆլիսի քաղաքային թատրո-
նում սկսվելու են ուսուցիչ դրամատիկական ներ-
կայացումներ՝ մասնաւորութեամբ Պետրոսի և
Նախահայր ուսուցիչներին խորհրդի։

Թիֆլիսի քաղաքային դռնայի վերջին նիստում
քննվեց ճանապարհորդի մէկի առաջարկը՝ քաղաքի
այն տուփաները, որ վերցնում է քաղաքային փո-
խատու արկից։ Այդ առաջարկը տաք վիճաբանու-
թիւնների առիթ տուց։ Հարցը ենթարկվեց
դատանի քուէարկության, և այդ վերին աստի-
ճանի համարելի առաջարկությունը մերժվեց 32
ձայնով, ընդդէմ 8-ի։ Երեւում է, որ մեր այժմեան
դռնայում բաւական զօրեղ են «բանկերի և կա-
պիտալի հերոսները», որոնք տուփու քաղաքի
խնդիրը ձայների ահալին մեծամասնութեամբ են
սեպնում։

Թիֆլիսի վարժուհիների ընկերությունը մի հա-
մալիքի դիտաւորութեամբ ունի,—այն է կամ բո-
լորովին շնչաւոր, կամ փոքրացնել այն տուփ-
ւը, որ ընկերությունը վերցնում է այս կամ այն
անդամին արած փոխաւորութեան համար։

Մեզ հաղորդում են, որ Ջառիկից յետոյ պ.
Պետրոսեան հայ գերաւանական խմբի հետ գնում
է Բաղու, մի շարք հայերէն ներկայացումներ
տալու։ Պ. Պետրոսեանի այս ձեռն թիֆլիսում
սուրճի ներկայացումները աշողութեան ունեցան,
անկասկած, նոյն աշողութեան կունենան և Բաղ-
ուում։

Համառոտապես յայտնի գլխաւորապէս կան
ցուցահանդէսը կը զուտարվի 1894 թվ. 07-
նոյն, երբ սովորելու է այդ քաղաքի հիմնա-
կութեան 100-ամակը։

«Моск. Вѣд.» լրագրում տպված է Մոսկվայի
Ֆիզիկո-բժշկական ընկերության ապրիլի 8-ի
նիստի հաշիւը։ Այդ նիստում հռչակաւոր պրոֆե-
սոր Ջառիկին մի գեղեցում արւաւ Կոխի մե-
թոդով թրքաւոր բուժելու մասին։ Ջառիկին
խախտար գեղեցումը կը տպագրվի «Медицина»

հրատարակութեան մէջ, սակայն Մոսկվայի լրա-
գիրը այդ գեղեցումն մի մասը էր էջերում տպա-
գրելով, բերում է այդտեղ և հռչակաւոր ուսու-
ցիչները ներկայացրած գեղեցումն եղբայրացու-
թիւնը։ Ջառիկին կարծիքով, Կոխի միջոցով
թրքաւորներին բժշկելու հետեւանք կամ հա-
ւասար է լինում դրոշմ, կամ աւելի վատացնում
է հիւանդի դրոշմը։ Տաւն և երկու դեպքից
Ջառիկին նկատեց միայն երկու դեպքում հի-
ւանդների ժամանակաւոր բարեորում։ «Արքեո-
հատնացած է այդ միջոցը», հարցնում է Ջա-
ռիկին,— և պատասխանում է «ոչ, չէ հասունա-
ցած»։ Այս հարցնում է, «արեւոք ապագայում
մի օր կը հասունանայ այդ միջոցը,—յայտնի չէ,
դա ցոյց կը տայ ապագան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԵԼԴՄԱՐՇԱԼ ԿՈՍՍ ՄՈՒՏԻԿԵ

Բերլինում այս օրերս վախճանված կուս Մո-
սկէ 90 տարեկան էր։ Նա ծնվեց 1800 թվ.ին
Մէլլեմբուրգի գնդակի տեղում։

Իր զինուորական ուսումն աւարտելուց յետոյ,
նա սկզբից մտաւ Գանիայի զինուորական ծառա-
յութիւն, ապա այդտեղից 1822 թվ.ին անցաւ
Պրուսիայի զինուորական ծառայութեան։ Դեռ
1835 թվ.ին Մոսկէի մի ճանապարհորդութեան
արեց արեւելքում և ներկայացաւ Մանուէլ սուլ-
թանին, որը ինչպէս նրան օտանանս զօրքի ժա-
մանակակից զինուորական վերանորոգութեան
գործին ձեռնարկելու Նա մնաց մի քանի տարի
Թիբերիացում, զինվարչական թիւրքաց զօրքի վե-
րանորոգութեան գործին։ Նա մասնակցեց Միւր-
այի պատերազմին 1839 թվ.ին։ Վերադառնալով
Պրուսիա, Մոսկէի անհնգհատաբար բարձրանալով
զինուորական աստիճաններում, փոքր առ փոքր
դարձաւ մի անհաւանաւ անձնաւորութեան պրու-
սական զինուորական շտաբի մէջ։ Այնուհետև
Պրուսիայի վարած բոլոր պատերազմների ծրա-
դիրները Մոսկէի ձեռքով էին մշակում։ Պրու-
սիայի զինուոր շտաբի կառավարիչ դառնալով
նա մշակեց Գանիայի դէմ պատերազմի ծրագիրը,
զեկավարեց Պրուսիայի և Ֆրանսիայի դէմ Պրու-
սիայի մղած պատերազմները։ Հանդուցեալը
համարվում էր ոչ թէ միայն Գերմանիայում,
բայց և ամբողջ Եւրոպայում՝ մի արտակարգ,
եղակի պատերազմական հանձնար։

Կարելի է ասել, որ զինվարչական ասպա-
րէզում եղակի հանձնար համարելով իշխան Բի-
մարիի հետ միասին կուս Մոսկէի, զինուորական
այդ եղակի հանձնարը, համարվում է Գերմանիայի
միւլթիւն ստեղծող։

Որպէս զինուորական գրող, նա յայտնի է զին-
վարչական հետեւի հեղինակութեամբ։ «Der
russisch-türkische Feldzug» (1835 թվ.ին), «Briefe
über sustände in der Türkei» (1841 թվ.ին),
ապա նրա խմբագրութեամբ հրատարակվեց «Der
italienische Feldzug» գրութեամբ։ Պատերազմը,
ինչպէս յայտնի է, տեղի ունեցաւ 1859 թվ.ին,
իսկ զինվար հրատարակվեց 1863 թվ.ին։

Մի երկու տարի առաջ Մոսկէի հրաժարական
տուեց ծառայութեանց և հեռացաւ մասնաւոր
կանքը։ Այնուամենայնիվ պետական նշանաւոր
հարցերում այժմեան զինվարական կայսրը, Վիլ-
հելմ II, միշտ խորհրդակցում էր Մոսկէի հետ,
մինչև ծերունի զօրավարի կեսից միջին բո-
ւլէն։

Կուս Մոսկէի մի և նոյն ժամանակ պատրաստա-
ւոր էր գերմանական պարլամենտում, պատկանե-
լով պարլամենտի կառավարչական կուսակցու-
թեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գնաստմանդից հաղորդում են, որ կրկնա-
բուժարկութեամբ Բիւմարիի և սօցիալիստների
թիւնում։ Շմալֆելդի մէջ կը կայանայ 18/30-ին
ապրիլի։

—Այլի առաջ ունենալով այն յուզմունքը, որը
ախրում է Գերմանիայում, «Post» լրագիրը ա-
մենախիտաճիւղ աղբիւրներից հաղորդում է, որ
ոչինչ առիթ չը կայ վախճանու թէ խաղաղու-
թեան կը խանդարվի։ Լրագիրն աւելացնում է
որ Գերմանիայի և Ռուսաստանի յարաբերութեան-
ները այնքան բարեկամական են, որքան վաղուց
է արդէն եղած չին։

—Արտասահմանում ուսուցի փողի կուրսը

բարձրացաւ և այդ երեւոյթը վերագրում են հացա-
հատիկների գների բարձրանալուն Բերլինի բոր-
ւայում։

—Պարիզից հեռագրում են, որ այս օրերս
կայացան սենատորները, ընտրութեանը Հերո,
Դորդոն և Սէն-Լուար երեք դէպաւտամենտե-
րում։ Ընտրվեցան սենատորներ՝ երկու հանրապե-
տականներ և մի պահպանողական։

—«Neue Freie Presse» լրագիրը կարծում է,
որ սերբիական կառավարութեանը, որը այժմ ըս-
կեց բարեկամական կերպով վերաբերվել դէպի
բուլղարական կառավարութեանը, անկեղծ կերպով
կօգնի այդ վերջինին Բելգիայի սպանդաններին և
Ստամբուլի կոստիքի դէմ փորձ անողներին որո-
նելու և դանդաղ։

—Սերբիայի նախկին թագաւոր Միլան հասաւ
արդէն Վիեննա և կը մնայ այդտեղ մի քանի օր։
Յոյս կայ որ Նատալիա թագուհին էլ շուտով
ստիպված կը լինի հեռանալ Սերբիայից։

—Իշխան Բիւմարիի օրդան, «Hamb. Nachrich-
ten» լրագիրը, այժմ յանկարծ փոխել է իր առաջ-
կայ ուղղութիւնը։ Այդ ցոյց է տալիս որ և ինքն
Բիւմարի փոխել է այժմ իր ուղղութիւնը։ Առաջ
նա Աւստրիայի խիստ բարեկամ էր, ձգտում էր
Աւստրո-Ունգարիայի հետ սերտ կապեր հաստատե-
լու։ Բայց այնուհետ զայնաւորը այդ պետութեան հետ
կապերու, իսկ այժմ բացարձակապէս ատում է,
որ Գերմանիայի համար վերին աստիճանի վտան-
գաւոր է բարեկամանալ Աւստրիայի հետ։ Ուրիշ
կողմից լրագիրը քաղաքում է Գերմանիայի և
Ռուսաստանի բարեկամութեան անհրաժեշտու-
թեանը, այն Ռուսաստանի, որին նախկին պե-
տական կանցլիւր աշխատում էր իր գործունեու-
թեան ամբողջ ընթացքում ամեն տեսակ վնաս-
ներ հասցնել։

—Կ. Պոլսից գրում են Վիեննայի լրագիրներում
հետեւեալը։ «Մեծ վիզլի դրոշմները օրքն օր աւե-
լի է խախտում։ Ինչպէս յայտնի է մեծ վիզլի
Քիւմովի-Քիւմովի ներկայացրել է սուլթանին մի դե-
կուցում, որի մէջ խտուրթամբ բողբոջում է այն
քանի դէմ, որ սուլթանի ծառայողները և սենե-
կապանները խառնվում են պետական գործերի,
մասնաւոր կոնցէսիսներ տալու մէջ։ Նա այն
միայն է յայտնում, որ անկարելի է դանձարանի
չանքը պաշտպանել, երբ դանդաղ աղբիւրիկ
անձինք աշխատում են իրանց գրպանը լցնել՝
այս կամ այն պետական գործերը արանհարմար
տալով։ Սուլթանը հրամայել է անմիջապէս քնն-
ներ և տեսնել թէ որքան ճիշդ է մեծ վիզլի ա-
սածը։ Ինքն սուլթանը վրդովվել է, լսելով այդ
բոլոր դեղձունների մասին իսկ նրա չըբապա-
տողներն արդէն ատում են կրճատցում մեծ վի-
զլի դէմ։

—Պրուսական կառավարութեանը սկսել է վե-
րաբերվել դէպի իր հպատակ լեհացիները բոլորու-
միս ուրիշ կերպ, քան թէ նոյն կառավարութեանը
վերաբերվում էր նրանց Բիւմարիի ժամանակ։ Ոչ
թէ միայն կառավարութեանը այլ ևս չէ շարու-
նակում բռնի կերպով գերմանական զորութեան
հոլթիւն հաստատել Պոզնան անուանված լեհա-
կան նահանգում և բռնի կերպով այլ ևս աւելի
չէ տալիս լեհական հողերը գերմանացի կառա-
ծատներին ձեռքով, բայց գերմանական աղագլին
լուսաւորութեան նոր միւսիսարը ներբերում կար-
գաւորութեան է արել, որով թոյլատրվում է լեհա-
կան նահանգում աւանդել զարգացան առարկա-
ները և կրօնը լեհական լեզուով։

ԻՍԱՐՆ ԼՈՒՐԵՐ

Առաջ զինուորական կար Անդրեան և Ֆրան-
սիան մի տունիւմ միացնելու, իսկ այժմ մա-
նաւանդ Ֆրանսիայում, շատ են խօսում Ֆրան-
սիայի և Անգլիայի ակերը մի հրէշաւոր կամուր-
ջի միջոցով միացնելու, որը պիտի կառուցվի
լաման նեղուցի վրա և որի վրայով կանցնի
երկաթուղին։ Երկու կամուրջի նախագիծը ար-
դէն կազմված է. դա կը լինի մի երկաթեալ ա-
հաղին կամուրջ, որը ամենին չի արդիւն նաւա-
դնացութեանը։ Կամուրջի կառուցումը կարող է
դուրս գալ 10 տարվայ ընթացքում։

Մի անգլիացի ձեռնարկող, մասնաւոր մի
թանգարանի տէր, հետեւալ միջոց էր գործ-
դնում, որպէս զի իր անուրը և իր թանգարանի
գոյութեանը երեք չը մուտքով հասարակութեան
մէջ։ Նա կողմնակի կերպով տպել էր տալիս այս
կամ այն լրագրում իր մասին մասին ուրը,
այսպէս իր լրագրում իր ստորագրութեամբ հի-
րում էր տպագրում, ասելով որ ինքն կենդանի
և առողջ է,— և անմիջապէս աւելացնում էր թէ
իր թանգարանը ամեն օր, այս ինչ ժամից մինչև
այն ինչ ժամը բաց է և մուտքն արժէ այցելու։

